«Երիտասարդ պատմագետների ասոցիացիա» ՀԿ-ի

EduArmenia կրթական նախաձեռնություն

Ուսուցիչների պետական պարտադիր վերապատրաստման
դասընթաց **2023**

Հետազոտական աշխատանք

<u>Թեմա՝</u> Ինչպես նպաստել համագործակցային աշխատանքների իրականացմանը հայոց լեզվի դասաժամերին

Հետազոտող ուսուցիչ՝ Սյուզաննա Խաչատրյան
(Հրազդան քաղաքի Խ. Աբովյանի անվան **N 1** ավագ դպրոց)

Հրազդան **2023**թ.

Բովանդակություն

Ներածություն.....2

Գլուխ I

1.1Ուսուցչի և սովորողի ներդաշնակ փոխգործունեության և համագործակցային ուսուցման անհրաժեշտությունը, նպատակները, առավելությունները: 4

Գլուխ II

2.1 Համագործակցային ուսուցման մեթոդներ 8

2.2Ուսուցման մեր փորձից 12

Եզրակացություն 18

Գրականության ցանկ 21

Ներածություն

<<Թե ուզում ես երգդ լսեն, ժամանակիդ շունչը դարձիր...>>,- չարենցյան այս պատգամն է ընկած բոլոր պատկառելի ուսուցիչների գործունեության հիմքում: Վեհ ու պատասխանատու է ուսուցչի առաքելությունը՝դառնալ աշակերտի պատմական կյանքի անբաժան ուղեկիցը:

Խորհրդատուի, ուղեցույցի դերը սերտորեն առնչվում է արդիական հնչեղությանը: Այն, ինչ իր ժամանակին օգտակար էր և ուսանելի, արդյոք պահպանե՞լ է այդ էական հատկանիշը մեր օրերում:

Իհարկե, սոցիալական տեղաշարժերի հետևանքով փոփոխության է ենթարկվել կյանքը, և այդ փոփոխությունները պայմանավորված են ոչ միայն ազգային առանձնահատկություններով, այլև համաշխարհային զարգացումներին բնորոշ աշխարհաքաղաքական, ժողովրդագրական, մշակութային, սոցիալական գործոններով: Եվ այս դեպքերում բոլոր բնագավառների, մասնավորապես հանրակրթության բարեփոխումը դառնում է անհրաժեշտ և անխուսափելի, որովհետև հենց այստեղ՝ դպրոցում է ձևավորվում ազգային մտածելակերպ ունեցող մարդ անհատը:

Ժամանակին Խաչատուր Աբովյանը նշում էր հայ երեխաների գիրք չկարդալու երկու հիմնական պատճառ՝ գրաբար լեզուն և անհետաքրքիր բովանդակությունը: Իմ խորին համոզմամբ այսօր էլ հայ մանկավարժն է տոգորված ճիշտ նույն մտահոգությամբ. ի՞նչ անել, որպեսզի հայ մանուկն ու պատանին գիտակցեն հայոց լեզվի կարևորությունը, գրագետ գրելու, գեղեցիկ, կապակցված մտքեր արտահայտելու, ճիշտ բառը ճիշտ տեղում կիրառելու անհրաժեշտությունը:

Անշուշտ, այսօր սովորողին նախևառաջ հուզում են իր անձը, անհատական ապրումները, սովորողը ձգտում է վերցնել այն, ինչի մեջ նպատակ և օգտակարություն է տեսնում: Բացի այդ շատերը նշում են, թե դասերը անցնում են անհետաքրքիր, միապաղաղ և ավանդական մեթոդներով(ուսուցչակենտրոն, միանձնյա...): Այսօր դասավանդման նախկին ձևերն ու մոտեցումները չեն արդարացվում, և ավելին՝ սովորողը հեռանում է դպրոցից: Այս խնդիրները լուծելու համար բավարար չէ սոսկ իմացությունը, այլ ուսուցիչը պետք է լավ իմանա ուսուցման բազմազան մեթոդները և դրանք կիրառելու կարողություն ձեռք բերի. չէ՞

որ ուսուցման մեթոդը ուսուցչի և սովորողի հետևողական, փոխկապակցված գործողությունների համակարգն է, որն ապահովում է կրթության բովանդակության յուրացումը: Այսօրվա դպրոցում ուսուցիչը պետք է որդեգրի կառուցողական մոտեցում, օգտագործի ժամանակակից մեթոդներ, առաջնորդվի նորարարական գաղափարներով, իրականացնի թիմային աշխատանք, որպեսզի ուսումնական գործունեության նկատմամբ ձևավորի սովորողի հետաքրքրություն:

Եվ այսպես՝ հետազոտությանս խնդիրն է ինչպես նպաստել համագործակցային աշխատանքի իրականացմանը հայոց լեզվի դասաժամերին:

Խորհրդային դպրոցին հղում անելով՝ կարող ենք արձանագրել, որ այդ կրթական մոդելի պարագայում սովորողն իր ցանկությունների ու ձգտումների մեջ առավել քան կաղապարված էր, անտեսված էին միասին մտածելու, միասին աշխատելու, քննելու, քննադատաբար մտածելու, համագործակցելու կարողությունները, իսկ այսօրվա սովորողն ազատ է, ուսուցիչները ակտիվորեն որոնում են սովորողների անմիջական մասնակցությունն ապահովող կրթական և ուսուցման պրակտիկաներ, և համագործակցային աշխատանքի ու նոր ինտերակտիվ մեթոդների ներդրումն էլ կրթական համակարգ հնարավորություն են տալիս սովորողին դառնալ դասի անմիջական նախագծողը, ինչի արդյունքում բուն դասապրոցեսը դադարում է սովորողի համար լինել ձանձրալի, ավելին՝ սովորողը մոտիվացվում է:

Այսպիսով՝ նպատակ է ընդգծել, որ ուսուցչի և սովորողի ներդաշնակ փոխգործունեությունը և համագործակցությունը իրապես կարևոր մոտեցում է ապագա հասարակության մեջ հաջողություն ունենալու համար անհրաժեշտ հմտությունների ձեռքբերման հարցում:

Գլուխ I

Ուսուցչի և սովորողի ներդաշնակ փոխգործունեության և համագործակցային ուսուցման անհրաժեշտությունը, նպատակները, առավելությունները:

Ժամանակակից աշխարհը խելահեղ արագությամբ փոփոխվում է, և մարդը դժվարանում է ընդունել, ընկալել և տեղավորել փոփոխությունների հետ առնչվող ողջ տեղեկատվությունը: Տեխնոլոգիաները այնքան են մուտք գործել մարդու կյանք, կենցաղ, ու աշխարհն այնքան է փոքրացել, որ որոշ նպատակներ դադարել են այլևս նպատակներ լինելուց:

Գլոբալ նպատակներ են այսօր միավորում մարդկությանը՝ էկոլոգիա, տեռորիզմ, գերտաքացում, միջուկային պատերազմի վտանգ, համաճարակներ և այլն: Նման գերխնդիր լուծելու համար անհատի դերը մղվում է հետին պլան:

Հայաստանում, ինչպես և ամբողջ աշխարհում, արդեն ակնհայտ է, որ մարդիկ ավելի ու ավելի շատ կարիք ունեն աշխատելու խմբերով: Ու եթե հաշվի առնենք, որ այսօր մեր հասարակության անդամները իրենց մտածելակերպով ու արժեքներով բազմազան են խորհրդային ժամանակների միատեսակության համեմատ, ապա հասկանալի է դառնում, որ համագործակցային բազմազան հմտություններ են անհրաժեշտ խմբային աշխատանքն ավելի արդյունավետ դարձնելու համար: Սա հատկապես գերխնդիր է մեր հասարակության համար, քանի որ հայերը սովորաբար ավելի հաջողակ են անհատական գործունեության մեջ, քան խմբային:Մինչդեռ այսօր, զուտ անհատականությունների վրա հիմնվելով, հնարավոր չէ հաջողության հասնել, պետական և հասարակական խնդիրներ լուծել:

Դպրոցը հասարակության հիմքն է և նրա մոդելը: Ապագա քաղաքացին պետք է համագործակցային կյանքին վարժվի դպրոցում:

Իսկ ի՞նչ է նշանակում դա: Երկխոսություն, հաղորդակցում, հանդուրժողականություն, աջակցություն, օգնություն հայցել, օգնություն տրամադրել, ինքնաճանաչում, սեփական վարքագծի կառավարում և այլն: Ահա սրանք են ապահովում ապագա քաղաքացիների համագործակցությունն ու համակեցությունը:

Հարց է ծագում՝ որոնք են համագործակցային ուսուցման առավելությունները, ինչով է առավել ավանդականից:

Համագործակցային ուսուցման կազմակերպումը հնարավորություն է ընձեռում սովորողներին սովորել իրենց էությանը համապատասխան ձևով, ընդհանուր նպատակի իրագործման համար ներդնել իրենց առավելությունները՝ ստանալով նաև դասընկերների աջակցությունը: Նախ՝ այն մղում է սովորողներին ավելի լավ սովորելու: Բոլոր սովորողների համար ստեղծվում է բարենպաստ միջավայր, որում նրանք կարողանում են արտահայտել իրենց ուժեղ կողմերը: Մարդը ամենաշատը սովորում է սովորեցնելիս, և մյուսներին սովորեցնելով՝ սովորողն ավելի լավ է սովորում:

Այն սովորելու անհատական ոճերի, սովորողի ինքնուրույնության և շարժառիթների իրականացման լավագույն ձևն է: Միասին աշխատելով՝ աշակերտները կարող են համատեղ նպատակների հասնել:

Համագործակցային ուսուցման կիրառումը սկսվում է դեռևս անտիկ դարաշրջանից: «Թալմուդը հասկանալու համար պետք է ընկեր ունենալ»,- գրված է Թալմուդում: Հռոմեացի փիլիսոփա Սենեկան ասում էր, որ սովորեցնողը կրկնակի է սովորում: Իսկ 17-րդ դարում Կոմենսկին հավաստում էր, որ սովորողները շահում են, երբ սովորում են ուրիշից, նաև երբ սովորեցնում են ուրիշի:

Ակադեմիական գիտելիքներից զատ դպրոցի համար պակաս կարևոր չեն տարբեր կարողություններ ու բնավորության գծեր ունեցող սովորողների հետ աշխատելու հմտությունները: Ահա այս ճանապարհով է, որ դպրոցը դառնում է հասարակության մոդելը:

Համագործակցային ուսուցումը խրախուսում է նաև ուսուցիչների համագործակցությունը: Հայաստանում, ավանդաբար, ուսուցիչները սովոր են միայնակ աշխատելու, ինչն արդյունավետ չէ: Չեն կիրառվում

դասընթացներն ու դասերը համատեղ պլանավորելու, միջառարկայական ընդհանրություններն արդյունավետ օգտագործելու աշխատանքը: Այս ուսուցումը արդյունավետ է այն դեպքում, երբ առկա է ոչ միայն սովորող–սովորող, սովորող–ուսուցիչ համագործակցությունը, այլև ուսուցիչ–ուսուցիչ համագործակցությունը: Ուսուցման արդյունավետությունը շոշափելիորեն բարձրանում է, երբ ուսուցչական կազմը գործում է որպես թիմ:

Համագործակցային ուսուցում իրականացնելու համար անհրաժեշտ է ապահովել որոշակի տարրեր: Լավ և վատ դասերը տարբերվում են հենց այդ տարրերի առկայությամբ կամ բացակայությամբ:

Իսկ որո՞նք են այդ տարրերը.

- դրական փոխկախվածություն,
- դեմ առ դեմ փոխազդեցություն,
- անհատական հաշվետվություն և պատասխանատվություն,
- միջանձնային կամ փոքր խմբերով աշխատանքի հմտություններ(սոցիալական համագործակցային հմտություններ),
- խմբային գործընթաց/մշակում,
- փոխներգործուն/ինտերակտիվ առաջադրանք (այս տարրը ապահովում է համապատասխան պայմաններ մյուս տարրերի կիրառման ու զարգացման համար):

Համագործակցային ուսուցումն այսօր իրապես կարևոր մոտեցում է ապագա հասարակության մեջ հաջողություն ունենալու համար անհրաժեշտ հմտությունների ձեռքբերման հարցում: Այս ուսուցման ընթացքում մենք (թե՛ ուսուցիչները, թե՛ աշակերտները) կարող ենք իրապես կենտրոնանալ միմյանց հետ արդյունավետ և ստեղծագործաբար աշխատել սովորելու վրա. ուսուցումը ընդլայնում է նաև տեղեկատվության կիրառման հնարավորությունները: Այս ամենից զատ համագործակցային ուսուցման կիրառման դեպքում ստացված ենք ուրվագծել նպատակներ, կայացնել որոշումներ, որի ընթացքում սովորում ենք մտքեր փոխանակել մեր ընկերների հետ, ունենալ հետադարձ կապ(ինքնազարգացում)... Մի խոսքով՝ համագործակցային ուսուցումն ավելին է, քան պարզապես մեթոդը: Դա կրթության հանդեպ վերաբերմունք կամ մոտեցում է, որը ներառում է ուսուցման ժամանակակից հայեցակարգեր: Նպատակն է՝ յուրաքանչյուր անհատի դարձնել ուժեղ անձնավորություն ժամանակակից հասարակության մեջ:

Ժամանակակից ամենատարբեր մեթոդների կիրառման դեպքում այս ուսուցումը ակտիվ գործընթաց է, որի գաղափարն է՝

Ընդունում	Զևափոխում	Նոր բովանդակություն
• Կապակցիր նոր տեղեկությունը քո ունեցած գիտելիքների հետ • Մտածիր, ընդունիր • Կառուցիր նորը, օգնություն խնդրիր • Հաշվետու եղիր • Պատրաստ եղիր	• Սովորեցրու • Կիսվիր • Վերարտադրիր քո սեփական բառերով • Ցույց տուր • Բացատրիր • Գործիր • Օգնիր • Հարցրու(խնդրիր)	• Ուսումնասիրիր • Հավաքիր տեղեկատվություն • Հայտնաբերիր • Տես • Հորինիր • Ստեղծիր • Համագործակցիր

Համագործակցային ուսուցման կարևորագույն ձեռքբերումներն են՝

- անձի զարգացումը և անհատականության ձևավորումը,
- հոգեբանական և ֆիզիկական առաղջության ապահովումը,
- սթրեսի հաղթահարումը,
- շրջապատողների հետ առողջ փոխհարաբերությունների կառուցումը:

Ուսուցիչը, սովորողների հետ համատեղ մշակելով համագործակցային համաձայնություններ և դասարանին սովորեցնելով իրականացնելու խմբային գործընթաց և ինքնագնահատում, ստեղծում է դասարանական նոր մշակույթ և մթնոլորտ: Եվ միայն՝ ուսուցիչ–սովորող փոխգործունեության, փոխներգործության, համագործակցության պայմաններում կարելի է ապահովել կրթության բարձր որակ և ձևավորել ուժեղ անձնավորություն ժամանակակից հասարակության մեջ:

Գլուխ **II**

2.1 Համագործակցային ուսուցման մեթոդներ

Բազմաբնույթ մեթոդների կիրառումը նպաստում է համագործակցային աշխատանքի իրականացմանը, ինչպես նաև՝

- սովորողների ճանաչողական ակտիվության բարձրացմանը,
- կրթական գործընթացին սովորողների ակտիվ ներգրավմանը,
- ինքնագործունեության խթանմանը,
- ճանաչողական գործընթացների խթանմանը՝ խոսք, հիշողություն, մտածողություն,
- ուսումնական նյութի առավելագույն մասի արդյունավետ յուրացմանը,
- ստեղծագործական մտածելակերպի զարգացմանը,
- աշակերտի անհատական հաղորդակցական–զգայական ոլորտի զարգացմանը,
- ուսումնական դրական խթանի զարգացմանը:

Գոյություն ունեն համագործակցային ուսուցման տարբեր մեթոդներ, որոնք ունեն ինչպես նմանություններ, այնպես էլ տարբերություններ: Համագործակցային ուսուցման մեթոդներն են՝

- Աշակերտների թիմային առաջադիմություն,
- Խճանկար,
- Շրջագայություն պատկերասրահում,
- Երեք բանալի և մեկ կողպեք,
- Հինգրոպեանոց ազատ շարադրանք,
- Մտածիր, զույգվիր, կիսվիր,
- Հետազոտական–որոնողական
- Էքսկուրսիա
- Անկյուններ և այլն:

Հակիրճ ներկայացնենք այդ մեթոդների էությունը:

Աշակերտների թիմային առաջադիմության մեթոդ: Համագործակցային ուսուցման այս մեթոդը մշակել է Ռոբերտ Սլավինը: Այս մեթոդը խթանում է աշակերտների ուսումնառությունը: Այստեղ էական է այն հանգամանքը, որ գնահատվում է աշակերտների առաջընթացը: Այս մեթոդը խթան է հանդիսանում ցածր առաջադիմություն ունեցող երեխաների համար, քանի որ նույնիսկ չնչին առաջընթացի պարագայում նրանք կարող են ներդրում ունենալ թիմի արդյունավետության բարձրացման գործում: Իսկ միջին ու բարձր առաջադիմությամբ աշակերտները պետք է մի կողմից օգնեն ընկերներին, մյուս կողմից՝ կարողանան պահպանել

ու բարելավել իրենց նախորդ ցուցանիշները: Այս մեթոդը կիրառելիս գնահատվում է , թե՛ առանձին աշակերտը և թե՛ խումբը:

Խճանկար (Ջիգսո,Jigsaw):Խճանկարը համագործակցային ուսուցման մեթոդ է: Այն մշակվել և փորձարկվել է Տեխասի համալսարանում՝ Էլիոթ Արոնսոնի և նրա գործընկերների կողմից, այնուհետև լրամշակվել է Սլավինի և վերջինիս գործընկերների կողմից: Խճանկարը դասարանում կարող է կիրառվել տարբեր ձևերով: Օրինակ՝ աշակերտներին կարելի է բաժանել չորս կամ հինգ անդամ ունեցող տարասեռ խմբերի: Յուրաքանչյուր խմբի տալ դասի մեկ հատված և որոշակի ժամանակ: Ձևավորվում են փորձագիտական խմբերը: Փորձագիտական խմբերում տրված հատվածը յուրացնելուց հետ աշակերտները վերադառնում են հենակետային խմբերը: Յուրաքանչյուր փորձագետ սովորեցնում է իր թեման խմբի անդամներին:

Շրջագայություն պատկերասրահում: Սա <<Խճանկար>> մեթոդի տարատեսակ է, որի նպատակն է փոխանակել տեղեկություններ, մշակել գաղափարներ և կատարել անդրադարձ, ինչպես նաև զարգացնել լսելու, ինքնուրույն աշխատելու, քննադատաբար և ստեղծագործաբար մտածելու, ցածրաձայն խոսելու, աշխատանքի արդյունքը ներկայացնելու հմտություններ: Կրտսեր դպրոցականների հետ աշխատելիս խմբերին կարելի է տալ նույն առաջադրանքը կամ խնդիրը: Աշխատանքը վերջացնելուց հետո, համեմատելով մյուս խմբերի աշխատանքների հետ, աշակերտները հետադարձ կապ են ապահովում:

Խմբային հետազոտության մեթոդ: Խմբային հետազոտության մեթոդի կիրառման ժամանակ աշակերտները աշխատում են խմբերով մեկ թեմայի շուրջ: Համագործակցային ուսուցման մյուս մեթոդների նման խմբային հետազոտությունը հիմնվում է աշակերտների փոխօգնության վրա: Խմբային հետազոտության մեթոդի հեղինակը պրոֆեսոր Շարոնն է, սակայն այս մեթոդի ակունքները հանդիպում են Ջոն Դյուիի տեսության մեջ: Այս մեթոդը կիրառելիս աշակերտները սովորում են համակարգված և վերլուծականորեն հետազոտել կոնկրետ խնդիրը: Աշակերտները խորությամբ են յուրացնում տրված նյութի բովանդակությունը և սովորում են համագործակցել հետազոտելու ընթացքում: Այսպիսով աշակերտները յուրացնում են բովանդակությունը, զարգանում է համագործակցային աշխատանքի հմտությունները:

Երեք բանալի և մեկ կողպեք: Աշխատանքը կարելի է կատարել զույգերով կամ խմբով. այս մեթոդը կարելի է կիրառել այնպիսի դասերի իմաստի ընկալման փուլում, որոնք բավականին ծավալուն են, նույն նյութին կամ երևույթին վերաբերող մի շարք բնորոշ հատկանիշներ կան: Աշակերտներին առաջարկում ենք դասից դուրս երեք նախադասություն (երեք բանալի), որը կարևոր է այդ նյութը յուրացնելու համար, բնագրից ընտրել մեկ նախադասություն (կողպեք), որը կամփոփի, կընդհանրացնի ասելիքը, միտքը, գաղափարը:

Հինգրոպեանոց ազատ շարադրանք: Հինգրոպեանոց ազատ շարադրանքի մեթոդը կարող է կիրառվել ինչպես դասի խթանման փուլում, այնպես էլ կշռադատման՝ ելնելով դասի նպատակից և թեմայից: Ընտրում ենք թեման և առաջարկում հինգ րոպեի ընթացքում ազատորեն շարադրել իրենց մտքերը, որից հետո դադարեցնում ենք աշխատանքը և ունկնդրում մի քանիսի գրած շարադրանքը:

Մտածիր, զույգվիր, կիսվիր: Այս վարժությունը արագ կատարվող համատեղ ուսումնառության վարժություն է, որը օգնում է սովորողներին մտածել, կշռադատել տեքստի շուրջ և ընկերների օգնությամբ հստակեցնել, ձևակերպել իրենց մտքերը: Ուսուցիչը թեմայի շուրջ նախօրոք հարցեր է պատրաստում, որոնք սովորաբար բաց բնույթ ունեն, և սովորողներին խնդրում է կրճատ գրել այդ հարցերի պատասխանները: Այնուհետև սովորողները զույգեր են կազմում և միմյանց հետ մտքեր փոխանակում՝ փորձելով գտնել այն պատասխանը, որն ամբողջացնում է իրենց երկուսի գաղափարները. վերջում ներկայացնում են իրենց քննարկումների արդյունքները:

Հետազոտական-որոնողական**(Veb-Quest):** Սա մի ուսումնական գործունեություն է, որի ընթացքում սովորողների ձեռք բերած գիտելիքները, տեղեկատվությունը հիմնականում ստացվում է ինտերնետային աղբյուրներից:

Վեբ-որոնման մեթոդով ուսուցումը ենթադրում է ելակետային մի հարցադրում կամ խնդիր, որը գործնական, ոչ թե տեսական պատասխանի կամ լուծման կարիք ունի: Սովորողներին առաջադրվում է հետազոտել վարկածները, մոդել կառուցել կամ խնդիրը լուծել:

Էքսկուրսիա: Վերջինս դասավանդման և ուսումնառության այն մեթոդն է, որի ընթացքում մասնակիցները կատարում են պլանավորված այցելություններ: Հայտնվելով կյանքի իրական իրավիճակներում՝ սովորողները ձեռք են բերում գիտելիքներ առարկայական ոլորտներում: Ապագա այցելությունը պետք է պլանավորվի ուսուցչի և՛ սովորողների միացյալ ուժերով, և՛ ցանկությամբ, որպեսզի այն անցնի հանգիստ և հաճելի մթնոլորտում: Հայտնվելով ռեալ իրավիճակում՝ սովորողն ուսումնասիրում է խնդիրներն ու առաջադրանքները: Մեթոդի կիրառման արդյունքում սովորողը կարողանում է զարգացնել վերլուծական կարողությունները, կատարել դատողություններ, զարգացնել հետազոտական, դիտարկման և փորձագիտական հմտությունները և այլն:

Անկյուններ: <<Անկյունները>> համագործակցային ուսումնառության վարժություն է, որի նպատակը հակասական հարցերի շուրջ բանավեճ ծավալելն է: Այն կարող է հաջորդել վիճահարույց տեքստի ընթերցմանը, ֆիլմի դիտմանը:

Համագործակցային ուսումնառությանը նպաստող մեթոդները անթիվ են և բազմաբովանդակ, սակայն աշխատանքի մեջ առանձնացված են այն մեթոդները, որոնք կիրառելի են եղել դպրոցում իմ և գործընկերներիս կողմից, ինչպես նաև կարող են օգնել մյուս ուսուցիչներին:

2.2 Ուսուցման մեր փորձից

Աշխատում եմ դպրոցում արդեն 25 տարի, 2010 թվականից՝ ավագ դպրոցում: Ավելացնեմ, որ ՄՄ նախագահ եմ: Երբեք որևէ խնդիր սովորողների հետ չեմ ունեցել: Գտել եմ, որ հաջողությանս բանալին նրանց սիրելն է, ճանաչելը, գնահատելն ու արժևորելը: Դասերս ինքնանպատակ չեն կառուցվում. կառուցում եմ դասարանիս հետ:

Անժխտելի է, որ աշխարհը արագ է զարգանում, վերափոխվում, փոխվում են նաև սովորողները, նրանց հայացքները, հետաքրքրությունները, ցանկությունները: Դժվար է դարձել շատերի համար կառավարել դասարանները, բավարարարել նրանց հետաքրքրությունները... Բարձր առաջադիմություն ունեցող աշակերտները սիրում են հայոց լեզուն, տիրապետում են առարկային և ակտիվորեն մասնակցում են դասապրոցեսին, մինչդեռ դասապրոցեսի մյուս աշակերտների համար առարկան անհետաքրքիր է, <<անպետք>> է, սկսում են ձանձրանալ և գուցե նաև դասը խանգարել:

Դասալսումների արդյունքում նման խնդիրների բախվել ենք, հատկապես տարեց ուսուցիչների մոտ, ովքեր մեծ դժվարությամբ են ընդունում այսօրվա պահանջները, նոր տեխնոլոգիաները, մեթոդները և հաճախ են կիրառում ավանդական մոտեցումները, որոնք այսօր չափազանց հնացած են և ոչ արդյունավետ:

Որպես ՄՄ նախագահ՝ պետք է լուծում տայի այդ խնդրին. ինչպե՞ս...

Իրականացվել են ՄՄ խորհրդի նիստեր, կազմակերպվել են հանդիպումներ հոգեբանի, ՄԿԱ գծով տնօրենի տեղակալի հետ, կատարվել են տարաբնույթ դիտարկումներ, հնչել են բազմաբնույթ տեսակետներ, առաջարկվել են լուծման տարբեր ուղիներ: Կազմակերպվել են նաև աշակերտական հանդիպումներ, քննարկումներ, երկուստեք տրվել են հարցաթերթեր, լրացվել են, վերլուծվել: Արդյունքում իրար լավ ճանաչեցին և փոքրիկ քայլերով կարողացան հաղթահարել այդ խնդիրը:

Ներկայացնում եմ հետաքրքիր կապը մեր ուսուցչի. <<Ես չէի ուզում ճանաչել իմ աշակերտին, հասկանալ նրան, լսել նրա կարծիքը, ինձ համար ամոթալի էր աշակերտիս մտքերը, խորհուրդները ընդունելը, գնահատել և արժևորել նրան, անգամ չեմ համագործակցել գործընկերներիս հետ, մտածել եմ՝ ամոթ է, իմ մեջ դեռ գործում էր սովետական ուսուցիչը, բայց հասկացա, որ պրոցեսին ընդդիմանալը տանելու է կործանման>>:

Մեծ աշխատանքից հետո ուսուցիչն ինքը վերափոխվեց. դասարանում կարողանում էր հետ մնացող աշակերտներին ներգրավել դասին: Այդ նպատակով առաջադիմող աշակերտներին տալիս էր սովորեցնող

ուսուցչի դեր և դասի վերջում հարցերով ամփոփում, թե ինչ չափով ինքը կարողացավ սովորեցնել: Ուսուցչի և սովորողների միջև ձևավորվեց դրական փոխկախվածություն. անգամ դասերը նախագծում էին միասին, որն էլ բարձրացրեց դասարանում ուսուցման որակը:

Նմանատիպ խնդիրներ լուծելով՝ ուսուցիչը սովորողների հետ իրականացրեց բաց դաս. աշխատանքը խմբերով էր, յուրաքանչյուրի պատրաստվածությունից և միաժամանակ միմյանց հետ համագործակցելու կարողությունից էր կախված դասի հաջողությունը:

Ստորև ներկայացնում եմ բաց դասի պլանը, որը կարող է ուղեցույց լինել ուսուցիչների համար:

Դասի թեման՝ Հոլովներ: Ուղղական և հայցական, սեռական և տրական հոլովների համեմատական քննություն:

Նպատակը՝ 1.Անցածի վերհիշում, ամրապնդում:

2.Ճիշտ խոսելու և գրելու կարողությունների, հմտությունների զարգացում, ամրապնդում:

3.Գոյականների տարբեր խմբերի հոլովական ճիշտ ձևեր կազմելու հմտությունների մշակում, զարգացում:

4.Կապակցված խոսքի զարգացում:

Դասի տիպը՝ ԽԻԿ համակարգ:

Օգտագործված մեթոդներ՝ Խմբավորում, Մտածիր, զույգվիր, կիսվիր, շրջագայություն, եռաթև աղյուսակ, հետազոտական-որոնողական, քառաբաժան աղյուսակ:

Տևողությունը՝ 2 դասաժամ

Ընթացքը՝

<u>Խթանման փուլ</u>

Քայլ I: նախօրոք պատրաստված պաստառը կախվում է գրատախտակից:

Աշնանային անտառը խշշում էր սառը քամուց:

Օրոր էր ասում աշունն անտառին:

Անտառի քունը չէր տանում:

Գյուղի բոլոր ճանապարհները տանում էին անտառ:

Անտառից դուրս եկան մի խումբ երեխաներ:

Անտառով էր անցնում ամեն անգամ:

Անտառում ամպի ծվեններ կային:

Հանձնարարվում է լուռ ընթերցանություն, և յուրաքանչյուրը գրում է, թե ինչ ընդհանրություններ տեսավ, ապա այն քննարկում է կողքի ընկերոջ հետ(Մտածիր, զույգվիր, կիսվիր):

Հարց-Ի՞նչ նկատեցիք նախադասությունները կարդալիս:

Պատասխաններ.....

Հարց-Քանի՞ նախադասություն է գրված և ինչո՞ւ:

Պատասխաններ.....

Հարց-Ի՞նչ եզրակացություն կարող ենք անել:

Պատասխաններ.....

Դասարանը կահավորված է այնպես, որ հեշտ լինի խմբային աշխատանք կատարելը:

Յուրաքանչյուր սեղանի վրա դրված է աշխատանքի բաժանման թերթիկը, որը կմնա այնքան, մինչև սովորողները վարժվեն իրենց դերերին.

1.Ընթերցող

2.Ժամանակին հետևող

3.Խրախուսող. գովաբանող

4.Դիտորդ

5.Գրառող

Քայլ II: Դասարանը բաժանել խմբերի(7 խումբ, 4-ական սովորող)՝ ըստ հոլովների, տալ գրավոր հանձնարարություններ: Յուրաքանչյուր խումբ պետք է ներկայացնի իր անվան(հոլովի) բառակազմական վերլուծությունը(օգտվել Հր. Աճառյանի բառարանից), տա ինքնուրույն մեկնաբանություն, բնորոշում, ցույց տա շարահյուսական կիրառությունները նախադասություններում և այդ ամենը ցուցապաստառի վրա գծապատկերի տեսքով ներկայացնի ընկերներին:(Շրջագայություն)

Խմբերին տրվում է 10 րոպե ժամանակ:

<u>Իմաստի ընկալում:</u>

Քայլ III: Ամրապնդման աշխատանքից հետո ամրացվում է երկրորդ ցուցապաստառը, ուր գծված է եռաթև աղյուսակ: Անցում է կատարվում բուն աշխատանքին. խմբերը նշում են աղյուսակի վրա ուղղական-հայցական, սեռական-տրական հոլովների նմանություններն ու տարբերությունները:

Այս համեմատությունը կարելի է կազմել նաև Վենի դիագրամով:

Քայլ IV: Հանձնարարվում է տեքստից(Ա. Բակունցի <<Ալպիական մանուշակ>> պատմվածքից) մի հատված և աշակերտները համեմատության ընթացքում նշված բոլոր արտահայտությունները փորձում են կիրառել տեքստի վրա:

Մեթոդը՝ հետազոտական–որոնողական:

Աշխատանքի ձևը՝ ձևավորվում են 6 խումբ՝ ըստ եռաթև աղյուսակների ուղղահայց կտրվածքների:

Խմբերին բաժանվում են հարցաթերթիկները՝ տարբեր հարցադրումներով:

I խումբ: Տեքստից դուրս գրել հոլովական զուգաձևություն ունեցող գոյականները:

II խումբ: Տեքստում ընդգծված բառերը ենթարկել բառակազմական վերլուծության, վերականգնել անհնչյունափոխ արմատները և դրանցից երկուսով կազմել բարդ բառեր:

III խումբ: Որոշել ընդգծված բառերի հոլովը և շարահյուսական կիրառությունները:

IV խումբ: Որոշել տեքստում ընդգծված բառերի հիմքն ու վերջավորությունը:

V խումբ: Տեղադրել ընդգծված բառերի հոմանիշները և բացատրել՝արդյոք տեքստը իմաստային փոփոխության ենթարկվո՞ւմ է:

<u>Կշռադատման փուլ:</u>

Քայլ V: Գեղարվեստական խոսքից դուրս գրված բոլոր բառերը ստուգելուց, քննարկելուց, վերլուծելուց, համադրելուց հետո հանձնարարվում է բոլոր խմբերին տեքստում ընդգծված բառերով կազմել ինքնուրույն բառակապակցություններ, կիրառել նախադասությունների մեջ: Խրախուսվում են առավել դիպուկ ու գեղեցիկ նախադասությունները:

Հանձնարարվում է տնային աշխատանք. օգտագործելով գեղեցիկ բառակապակցություններն ու նախադասությունները՝ գրել տեքստ(բառապաշարի հարստացում և կապակցված խոսքի զարգացում):

Այսքանից հետո կատարել անդրադարձ՝ կիրառելով քառաբաժան աղյուսակը.

ինչ արեցի	ինչ սովորեցի	ինչ չստացա	ինչ կցանկանայի ավելացնել

Գնահատումն իրականացվում է սովորողների հետ քննարկված և նախապես գծված սանդղակի միջոցով:

Գնահատման չափանիշ	Միավոր	Խումբ I	Խումբ II	Խումբ III	Խումբ IV	Խումբ V	Խումբ VI
Լեզվական մտածողությունը և արագ կողմնորոշվելու հնարավորությունը	4						
Խմբի համագործակցային աշխատանքը	3						
Կարգապահությունը	3						
Ընդամենը	10						

Հետազոտություններ իրականացվել են նաև հայոց լեզվի դասաժամերին ավելի երիտասարդ ուսուցիչների մոտ, ովքեր, բացի նրանից, որ գերում են սովորողին իրենց <<թարմությամբ>>, ավելի զինված են նոր մեթոդներով, ընդունում են տեխնոլոգիաները, երբեք չեն լքում խմբային աշխատանքը, ստեղծում են հարցուպատասխանի կետեր, օգտագործում են սովորողի կարծիքը և այլն:

Հատկապես շատ են կիրառում հարցումների վրա հիմնված ակտիվ ուսուցումը: Դասը դասախոսություն կարդալու փոխարեն սկսում են հարցեր, խնդիրներ կամ սցենարներ առաջադրել, մարտահրավերներ նետել: Պատասխանը գտնելու համար սովորողները պետք է ուսումնասիրեն թեման խմբով: Այս մեթոդը օգնում է նրանց զարգացնել խնդիրներ լուծելու և հետազոտելու հմտությունները:

Առհասարակ, բոլոր դեպքերում, երբ համագործակցային ուսուցումը ճիշտ է իրականացվում, բերում է հետևյալ առավելությունները.

- Օգնում է զարգացնել քննադատական մտածողությունն ու դատողությունը:
- Նպաստում է սովորողների ինքնագնահատականի բարելավմանը:
- Օգնում է բարելավել սոցիալական, հաղորդակցական և հուզական կառավարման հմտությունները:
- Խթանում է անձնական պատասխանատվության զարգացումը:
- Բարելավում է հասակակիցների հարաբերությունները:
- Անհանգստությունը, որը տեղի է ունենում սովորելու շատ համատեքստերում, նվազում է:

Այսպիսով՝ համագործակցային ուսուցումը ուսուցիչների զինանոցում ամենաօգտակար գործիքներից մեկն է:

Եզրակացություն

Այս թեմայի ուսուցումը մեզ բերեց այն եզրահանգման, որ այսօր համագործակցային ուսուցումն իրապես կարևոր մոտեցում է. այն հնարավորություն է ընձեռում սովորողներին՝

- սովորել իրենց էությանը համապատասխան ձևով, ընդհանուր նպատակների իրագործման համար ներդնել իրենց առավելությունները՝ ստանալով նաև դասընկերների աջակցությունը,
- անկաշկանդ արտահայտվել,
- մտածել, ըմբռնել, կառուցել նորը, օգնություն խնդրել, սովորեցնել, կիսվել, սեփական բառերով վերարտադրել, օգնել, հարցնել, բացատրել, ուսումնասիրել, հայտնաբերել, հորինել, ստեղծել,համագործակցել, պատասխանատու, ինչպես նաև՝ հաշվետու լինել....

Իսկ ինչո՞վ է պայմանավորված այս ամենը, ինչպե՞ս նպաստել դրան:

Ստորև ներկայացվում են լուծումները:

1.Ուսուցիչը ստիպված է փոխել իր մտածելակերպը, քայլել ժամանակին համահունչ:

2.Ճանաչել, գնահատել և արժևորել սովորողին:

3.Պատասխանատվությունը պետք է քայլ առ քայլ տեղափոխել սովորողների վրա:

4.Առավել կենտրոնանալ համատեղ ուսուցման գործընթացների և հմտությունների ձեռքբերման խնդիրների վրա:

5.Հաճախակի իրականացնել խմբային աշխատանքներ՝ ձևավորելով 4-5 հոգանոց խմբեր:

6.Դասարանում ստեղծել բարենպաստ միջավայր, առողջ մթնոլորտ:

7.Մոտիվացնել սովորողներին:

8.Դասերը պլանավորելիս ապահովել թեմայի արդիականացումը, ինչպես նաև՝ միջառարկայական և վերառարկայական կապերը:

.Ստեղծել խմբային նպատակներ:

8.Խրախուսել սովորողների շփումը:

9.Մարտահրավերներ նետել սովորողներին:

10.Կազմակերպել զրույց-բանավեճեր:

11.Օգտագործել սովորողների կարծիքները:

12. Քննարկումներ ստեղծել ընթացիկ գործերի վերաբերյալ:

13.Իրականացնել մոնիտորինգներ:

14.Ձափել արդյունքները փորձից հետո:

15.Հաճախակի կազմակերպել էքսկուրսիաներ:

16. Դասերին հաճախակի կիրառել համագործակցային ուսուցումը խթանող մեթոդներ, որոնք են՝

- Աշակերտների թիմային առաջադիմություն,
- Խճանկար,
- Շրջագայություն պատկերասրահում,

- Երեք բանալի և մեկ կողպեք,
- Հինգրոպեանոց ազատ շարադրանք,
- Մտածիր, զույգվիր, կիսվիր,
- Հետազոտական–որոնողական
- Էքսկուրսիա
- Անկյուններ
- Հարցումների վրա հիմնված ուսուցում և այլն:

Ահա այս և համանման մոտեցումների դեպքում կարելի է հասնել միայն ցանկալի արդյունքի, դրանց հետևողական և տեղին կիրառումը հայոց լեզվի յուրաքանչյուր դասաժամ կդարձնի ավելի նպատակային, հետաքրքիր, առանձնահատուկ և կերաշխավորի կրթության բարձր որակ:

Գրականության ցանկ

1.Մարդ և հասարակություն, երևան 2008, N3,4

2.Համագործակցային ուսուցում, Երևան, <<Անտարես>>

3.Աստվածատրյան Մ.,Վարդումյան Ս., Արնաուդյան Ա., Օհանովա Ի.,Պետրոսյան Ռ., Երեմյան Լ.,<<Ուսումնառությունն ու դասավանդումը կրտսեր դպրոցում>>(ձեռնարկ ուսուցիչների համար), Երևան, հրատ. <<Այրեքս>> 2001, էջ 319

4.Արնաուդյան Ա., Օհանովա Ի.,Հովհաննիսյան Գ., Զոհրաբյան Ա., Գրիգորյան Քֆ., Դավթյան Մ., << Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները>> (ձեռնարկ ուսուցիչների համար), Երևան, հրատ. <<Տիգրան Մեծ>>2005, էջ 335

5.Խաչատրյան Ս.Գ., Աշակերտների ինքնուրույն և ստեղծագործական աշխա- տանքի ձևերը մայրենիի ժամերին /համագործակցային ուսուցում/, «Նախա- շավիղ», 1. 2003, Երևան, «Տիգրան Մեծ»,

6.Խաչատրյան Ս.Գ., Ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառումը, Գյումրի, 2006, էջ 64

7.Հովհաննիսյան Ա., Հարությունյան Կ., Խրիմյան Մ., Խաչատրյան Ս., Բայաթյան Ն., Ալեքսանյան Լ., Պուրուկուրու Վ., Համագործակցային ուսուցում, Երևան, <<Անտարես>> հրատ., 2006, էջ 117

8.Սարգսյան Վ. Ա., Թորոսյան Կ., Խաչատրյան Հ. Վ., Ջիլավյան Ե. Խ. << Մայրենի 3>> , Երևան , << Մակմիլան- Արմենիա>> հրատ., 2011

9.Վարդումյան Ս., Ջաղինյան., Հարությունյան Լ., Գարի Վարելլա, Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, Երևան, <<Նոյյան տապան>> հրատ., 2005, էջ 402

10.Վինցե Սաբո, Ադամ Մերենյի Աթիլլա Տակաչ, <<101 գաղափար նորարարական մեթոդներ կիրառող ուսուցիչների համար>>, Բուդապեշտ, 2006

11.<<Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ>>, Վանաձոր, Կրթության ազգային ինստիտուտ, Լոռու մասնաճյուղ, 2008, էջ 98

12.Ուսուցման արդյունավետ հնարներ/Ս. Խաչատրյան/Երևան/Ֆրիդրիխ Էբբերտ հիմնադրամ, Հայաստան 2020, էջ 71